

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ Համար

Տարեկան Ֆրբ. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան Ֆրբ. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆՆՈՒՄ



Գրութիւնք եւ չին
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երբ կ'ուզեմք «Հայեցի» ին մէջ աղոտ երեւնալ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԵՏԻ ՄԸ

Պուլկարիոյ վարժարաններու տա-
րեկան բնութիւնները աւարտեցան:

Այս երեք տարուան ժամանակամիջոցին
մէջ ամէն կողմէ քննադատութիւններ, կար-
ծիքներ ու առաջարկութիւններ լսուեցան
վարժարանաց ծրագիրներու մասին:

Փոփոք, հին վարժարանական դրու-
թեամբ սովորութիւն եղած է ամեն տարի
հարցաքննութեանց հանդէսին մէջ քննադա-
տել ու պախարակել նախորդ տարիներու
ուսուցիչները, առանց շատ անգամ գիտնալու
իսկ թէ ինչ որոշ ծրագիր ունեցած էին ա-
նոնք և ինչ հիման վրայ յառաջ տարած էին
գործը, այնպէս որ շատ անգամ կը բան-
դուի կազմակերպուած ուղղութիւն մը պար-
զապէս վարժապետական քմահաճոյքի մը հա-
մար: Մեր մէջ ուսուցիչ մը կամ տնօրէն մը,
ըլլայ համալսարանական(?) կամ միջնակարգ
դասարանի մի ընթացաւարտը, երբ տեղ մը
գործի կսկսի, ամենապէտ է ինքը եւ ան-
միջեղի է իր ծրագրին առաւելութիւններու
վր, որուն առջեւ պէտք է խոնարհին ամեն
բանգետ գլուխներ, թաղական եւ կամ հո-
գաբարձուներ ու նոյն իսկ պետական ծրա-
գիրներ: Փոխանակ անպատշաճ ու քմածին ծրա-

գիրներ ընդունելով ամէն տարի փաստելու,
աւելի լաւ չէ՞ որոշ ծրագիր մը ունենալ,
քննադատուած, ծեծուած խել մը խելահաս
ուսուցիչներէ. ինչ տեղը կայ շարունակ հը-
լապալակներու մէջ ճոռոմարանել և պաշտ-
պանել անհատական «ես» ծրագիրները:

Պուլկարիոյ վարժարանաց շատերուն
այս խղճալի վիճակը աչքի առջեւ ունենալով,
կառաջարկենք սր տարեկան արձակուրդի
պատճառաւ այս միջոցին հետզհետէ վառնա-
համոզ ուսուցիչները գումարումներ բնին և
իրենց մէջ համաձայնելով, ամեն վարժարա-
նաց մէջ գործադրելի չէնք շնորհք ծրագիր մը
պատրաստեն, զոր չենք կարծեր որ մերժուի
ո և է հոգաբարձութեան մը կողմէ: Մեր
ուսուցիչները շատ աղէկ գիտեն թէ աշխար-
հի յառաջագէտ ազգերը մի միայն մէկ ծը-
րագրով եւ ուղղութեամբ կը կառավարեն
այս կարգի նախակրթարանները, հետեւա-
բար մենք ալ ունենալու ենք որոշ միօրինակ
ծրագիր մը:

Ասով վերջ պիտի տրուի այն կարգ մը
պարոններու ճոռոմարանութեանց, որոնք կը
յայտարարեն թէ մէկ տարուան մէջ հրաշք-
ներ գործեր են շնորհիւ իրենց հրաշալի եւ
անզուգական ծրագրին, թէ տղաց մէկ բանի
տարուան մէջ սորվելիքը իրենք տասն ամ-
սուան մէջ սորվեցուցեր են. թէ վարժա-
րանը իրենց յանձնուած ատեն անկերպարան
վիճակ մը ունենալով ուսանողը բան մը չը
գիտեն եղեր եւն, եւն:

Ուսուցիչներու այս ընթացքէն երկու բան կը հետեւի. մին ինքզինքնին ցոյց տալ հասարակութեան որպէս տիպար ուսուցիչներ, երկրորդ, մեր պաշտօնական մարմնոց թոյլ կողմերը ու փառասիրական զգացումները գգուել ի հաշիւ իրենց «հսկին»:

Մենք կը յուսանք որ մեր առաջադէպ ուսուցիչներու կողմէ նկատողութեան առնուելով կը գումարուին եւ պէտք եղած ծրագիրը կը պատրաստեն յօգուտ իրենց եւ ազգային դաստիարակութեան:

Իսկ եթէ Պուլկարահայ վարժարանաց մէջ այս տեսակ ծրագիր մը գոյութիւն չունենայ, ամեն տարի հասնող ուսուցիչը ձեռքը պիտի ունենայ ցախ աւել մը ու կրնան ալ ծրագիրներու պարութեա մը, առաջնով աւելու համար նախորդին կարգադրութիւնները, իսկ երկրորդով ցոյց տալու համար իր դարավերջիկ հրաշագործութիւնները:

ԳԻՄՆԻՆ

(ԱՅՍՈՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ)


Պաշկարիոյ Եղեմոսֆր

— Պուլկար կառավարութիւնը, Լանտէր Պանքի միջոցաւ, ստացաւ 32½ միլիոն ֆր. իբրեւ կանխավճար հին փոխառութեան սակերու միացմամբ կատարուելիք փոխառութեան: Պուլկար կառավարութիւնը այդ գումարին 29 միլիոնովը իր զանազան պարտքերը վճարեց:

ԱԶԳԱՅԻՆ

Զէյթունէն գրած են Պատրիարքարան թէ տեղւոյն Բողոքականները իրենց վարժարաններուն ծրագիրը ըսկըսեր են բարձրացնել եւ միանգամայն տեղացի Բողոքական Հայերուն դրամագլուխներ հայթայթել, որով գիւղացի ժողովուրդը իր երկրագործական պէտքերը կը հոգայ: Այժմ Զէյթունի մէջ ցորենը շատ սուղ գինով կը ծախուի, եւ վարուցան չունեցողները կարօտ վիճակի մէջ են:

Հայ Հռովմէականաց Պատրիարք ընտրուեցաւ Կեսարիոյ առաջնորդ Պօղոս Եպս. Էմմանուէլեան, 70 տարեկան է:



— Պէրպէրեան վարժարանի այս տարուան չըջանաւարտներն են.

Բարսեղ Քիշիշեան, Կեսարացի

Յակոբ Գալֆայեան, Պոլսեցի

Տիգրան Գալլաքճեան, ”

Սեպուհ Տանձիկեան, Ակնեցի

Յակոբ Նորհատեան, Չմշկաձագցի

Կոպեռնիկ Պէղազեան, Պոլսեցի

Հրանտ Գայլքճեան, ”

Գէդէոն Զէօմէկճեան, ”

Երուանդ Գոլանճեան, ”

Ասոնցմով Պէրպէրեան վարժարանին չըջանաւարտներուն ընդհանուր թիւը կ'ըլլայ 126:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կը փութամ հրապարակաւ իմ ջերմ շնորհակալութիւնս յայտնել տեղւոյ Պատ Հոգաբարձութեան, որ տարիէ մը ի վեր ենթակայ եղած տաժանելի հիւանդութենէս զիս բուժելու համար պէտք եղածը չի խնայեց նախ զիս զըրկելով Պուրէշի հիւանդանոցը, եւ այս անգամ ալ ըստ բժշկաց հրահանգի Պուրկաղ զրկելու համար պէտք եղած ծախսէ հանգանակութեամբ հոգալով:

Վառնա

Արմենակ Գալֆաեան

ՏԵՂԱԿՆ ԿԵԱՆՔԷ



ՕՐԻՈՐԴ ՇՐԱՔԻՐ

Առ առաւելն տասնեւչորս տարեկան եղած ատենը վարժարանը կը թողու, կամ լաւ եւ է ըսել ստիպուած է թո-

դու, ըստ ընկալեալ ընդհանուր սովորութեան, որովհետև շատ կարգալը ազնկներուն համար լաւ չէ. պէտք է անոնք աւելի ուժ տան ձեռագործի և տնական գործերու:

Օրիորդ Հրաբիր երբ վարժարանը կը թողու, գիրքերն ալ մէկգի կը ձգէ ու կը մոռնայ ամէն բան: Եթէ հարկ ըլլայ նամակ մը գրել, շատ դժուարութեամբ իրարու քով կը շարէ գիրքերը, զոր կարգալու համար շատ անգամ իր ներկայութեանը պէտք կը ըլլայ: Օրիորդը մայրենի լեզուն սորովելու մեծ փափագ ունի, իւր ընկերակիցներուն հետ ամենեւին տաճկերէն չի խօսիր. այս բարեմասնութիւնը գովելի է, մինչդեռ կան կարգ մը երիտասարդներ, որոնք այնչափ նախանձախնդիր չեն մայրենի լեզուի խօսելու:

Օրիորդ Հրաբիր շատ հեղ է. ամենուն երեսին կը ժպտի. իր ընկերու հիններուն պէս ինքն ալ արդուզարդ կը սիրէ, կ'ուզէ ամեն մօտայի յարմարիլ, բայց ինչ ընէ, իր հայրը չնչին օրականով պարզ գործաւոր մըն է, չի կրնար ամեն բանի հասնիլ. խեղճ Հրաբիր կը պարտաւորի զանազան ձեռագործներ բանիլ ու ծախելով անոնց արժէքովը հոգալ իւր պէտքերը: Տեսնելով որ երկուեւ հանրութիւնը իրիկունները հաճի Բանաթօ կերթայ, ինքն ալ կը փափագի, բայց որովհետեւ երթայ. թէեւ եղբայր մը ունի, բայց ան ալ ատանկ բաներէ չի հասկնար. Երկար ազաչանքներէ ու պաղատանքներէ վերջը մայրիկը կը համոզէ ու անոր հետ տունէն կը մեկնի: Պատած ժամանակը միշտ կը կարծէ թէ քովէն անցնողները իրեն համար գովասանքներ կ'ուտան. «Որմէ՞ վար կը մնամ», կըսէ ինքն իրեն, «Գեղեցիկ եմ», կը հագուիմ, կը սգուիմ, կարգ մը աղջիկներուն պէս երիտասարդներու հետ բնաւ չեմ տեսնուիր. արդեօք ինձմէ պատուաւոր աղջիկ մը պիտի գտնե՞ն»: Ուրիշ ամեն օրիորդներուն վրայ մէյմէկ պակասութիւն գտնելով, կը կարծէ թէ ինքն է ամենակատարեալը: Բայց դժբաղդաբար

իւր գեղեցիկ ու փայլուն երեւակայութիւնները երբեմն յօգս կը ցնդին, որովհետև... քառասունոց կօշկակար մը իր ձեռքը կը խնդրէ: ՖԷՊԻՒՍ

Ծ Ի Ծ Ա Ղ

Գեղեցիկ սեռը տկար էակ մըն է որպէս մեղու, բայց երկուքին ալ խայթուածքը կծու է:

Ապուշի մը գեղեցիկ աղջիկ տալը՝ գգմենի մը վրայ վարդ պատուատելուն կը նմանի, չի բռներ:

Շատախօս կին մը անբերելի տուրք մըն է գրուած ամուսնոյն վրայ:

Ծեր կիները սիրոյ քաղաքականութեան մէջ պաշտօնազուրկ նախարարներ են:

Սէրը անանկ մանուկ մըն է որ խենդ է, կոյր է, փոփոխա՛խտ է, հաստատամիտ է, գլխասիրտ է, բարչարոս է, շողորթ է, անաչառ է. հրամայեցէք պարօն մանկավարժներ, դաստիարակեցէք տեսնեմ այս տղան:

Ծերերուն սէրը ձմեռ ատեն ջերմոցներու մէջ բացուած ծաղիկներու կը նմանի, ամառուանին ո՛չ հոտը ունի ու ո՛չ կեանքը:

Ով որ կ'ամուսնանայ, աղէկ կընէ, ով որ չ'ամուսնանար, աւելի աղէկ կընէ:

Ամուսնութիւնը երջանկաւէտ ընելու համար պէտք է որ էրկը խաւ ու կինը կոյր ըլլար:

Երբոր մէկը կ'ամուսնանայ, սէրը կամաց կամաց անկէ կը հեռանայ:

ԱՆԿՈՒՏԻՈՒԹԻՒՆ

Ա.

ԱՆԿՈՒՏԻՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

1. Անկուտին ստիպուած չէ առտուն կանուխ արթննալ. նա անուշ անուշ կը բընանայ, վասն զի ազատ է գործէն ուշ մնալու և կամ դրամ շահելու հոգէն ու մըտմտութեն: Երկար բարակ սուրճ, թէյ կամ կաթ խմելու ծախքեր ալ չունի: Երեսը լըւանալէն ետքը բարեկամ մը կը գտնէ ու անոր շնորհիւ քիչ շատ փորը կը կշտացնէ, իսկ եթէ բարեկամ մը չի գտնէ, աղբիւրին կը դիմէ, որուն երեք անգամ այցելութիւն տալը ժուժ մը հաց ըսել է:

2. Անկուտին՝ ազգայինն է. ո՛ր որ երթայ, ո՛ր սրճարանը որ նստի, առանց վըճարելու իր օրը կանցնէ. ծախք չունի:

3. Երբ ամեն մարդ իր աշխատութիւնովը կը զբաղի, մանաւանդ այս տաք օրերուն, անկուտին կը քաշուի ծովեզերեայ հանրային պարտէզը, ու հոն հովասուն ծառերուն տակ յաբուր և զով օդ շնչելով, մշիկ մշիկ բուն մը կը քաշէ, առանց վախնալու թէ քսակահատը պիտի գայ թոցնէլ իր... չունեցած քսակը:

4. Անկուտին պարտաւորուած է խոհեմ եւ զգոյշ ըլլալ, տուքանքի չի մատնուելու համար երկու կռուողներու մէջ չի մտնալ, ի մի բան իր վրայ գալիք փորձանքներէն հեռու փախչիլ:

5. Նա՝ խել մը նպաստ խնդրող, գըլխու ցաւ պատճառող աղբատներով շրջապատուելէ վախ չունի:

6. Անկուտին՝ ամենեւին չի մասնակցիր ՚ի նպաստ տրուած թատերական ներկայացումներու, սովելոց համար ըլլալիք հանգանակութիւններու, աղքատախնամին բաժանորդ գրուելու ու եկեղեցիին թաղախններուն մէջ փարա ձգելու:

7. Նա կրնայ թատրոն, պարահանգէս, հարսնիք, անուան տօնախմբութեան ու խըն-

ճոյքներու ներկայ գտնուիլ առանց վճարելու: Անկուտիաբար կը կարգայ նաև լրագիր, գիրք, վիպասանութիւն, պատմութիւն այլ լրվքն հանդերձ:

8. Անկուտին՝ թաղական, հոգաբարձու եւ այլ ազգային պաշտօն մը չ'ստանձնելով, անոնցմէ առաջ գալիք ծանր հոգերէն ու մըտածումներէն ալ ազատ է:

9. Անկուտին՝ մասնաւոր սենեակի, օթէլի և անկողինի համար ծախքեր չունի, ո՛ր որ հանգստի, հոն կը պաւկի, հաւատարմաբար հպատակելով այն առածին որ աներտէ սապահ՝ օրտա ազշամը կը տրամադրէ, աւելց կը հասկցուի նաև որ անկուտին անկողինն ու վերամէլը իր... հագուստներն են:

10. Վերջապէս, անկուտին եթէ օր մը մեռնի, տէրտէրի, խաչալէմի, ժամկույի ու լուսարարի, մինչև իսկ պատանքի ծախքերէ խղճի կամտրեալ հանդարտութեամբ ազատ է:

Վերջիշեալ տասը օգուտներով սրտին մխիթարանք տուող

Ծոյ Անկուտին

* *

Բ.

ԱՆԿՈՒՏԻՈՒԹԵԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ

1. Անկուտին չի կրնար տեղ մը հանգիստ պաւկիլ, որով կը ստիպուի առտունները ուշ ելնել ու իր մարմինը ծուլացնել: Նա արթնցածին պէս իր ֆիզիքական ներքին ու արտաքին խնամքները չի կրնալ տանելու հոգէն ու մտմտութեն կը մաշի, որով օր օրի իւր աւողջութիւնը խանգարման կենթարկէ: Մըտերիմներու վրայ բեռ մ'է, իր փորը կշտացնելու համար բարեկամէ բարեկամ կը դիմէ, տարբեր մուրացկանութիւն մը, որ շատ անգամ ամօթ սեպելով, աղբիւրին կը դիմէ:

2. Անկուտին՝ հանրութեան ակամայ փնտաւար մէկ անգամն է. նա կը մտնէ ամեն դասակարգի մէջ, սրճարան, թատրոն,

եային, որոց կը վնասէ իր անկուտիութեամբը:

3. Ամեն մարդ քիչ շատ կաշխատի, ամեն բան առաջգիծելու վրայ է. իսկ անկուտին զրկուած է ազկէ եւ իր օրերը կանցնէ յարդի կամ խոտի պէս, որով մարդկութեան օգտակար չի կրնար ըլլալ:

4. Անկուտին սրտի նեղութիւն ունի, դէպի ուրիշներու ունեցածին նախանձը ու փափագը զինքը ապուշ կընեն. անխոհեմութիւնը բոյն կը գնէ անոր մէջ ու շատ անգամ ամեն կոիւններու ու վտանգներու կը զոհուի:

5. Անկուտին՝ աղքատաց նպաստելու բաժնին մէջ պակաս մըն է, մանաւանդ իր անկուտիութեամբը աղքատ մըն ալ աւելցած կըլլայ:

6. Նա՛ ի նպաստ տրուած ներկայացումներու, և հանգանակութիւններու մէջ անօգտակար արարած մըն է:

7. Անկուտին գրական ասպարէզի մէկ ուտիճն ալ կրնայ համարուիլ, իր ձրիաճարակութեամբը, որ բաւական կը վնասէ հրատարակչներուն:

8. Անկուտին՝ թաղականի կամ հոգաբարձուի պաշտօն մը չ'ստանձնելովը, հանրութեան օգտին համար ունեցած պարտականութեանը մէջ անկարող կը գտնուի:

9. Անկուտին՝ իր գլուխը գնելու համար կանանաւոր տեղ մը չ'ունենալովը կրնայ միշտ հիւանդութեանց հնթակայ ըլլալ ու բարեկամաց կամ ազգային հաստատութեանց վըրայ բեռ մը ըլլալ:

10. Արջապէս անկուտին իր մահուամբը տեսակ մը տուգանքի ենթարկած կըլլայ տէրտէրը, խաչալէմը, լուսարարը ու ժամկոչը, որոնք «սաղլըզ սէլամէթ իլէ էօլմէյէ-տին» ըսելով՝ բիթերնին բերաննին կը ծըռ-մըրտկեն:

Արդիւնէալ տասը վնասներով սրտի ու խղճի կատարեալ անհանգստութեամբ ախ փախ ընող

Անօգնական մնացած աշխատասէր
Անկուտին

ԶԱՆԱԶԱՆ Ք

ԹՈՒՔԱԽՏԻՆ ԴԱՐՄԱՆԸ

Բժշկական աշխարհի համար կարեւոր և մարդկութեան այն դժբաղդ մասին համար որ թոքախտէ կը տառապի, սիոփարար լուր մը կուտայ *Ֆիկառօ*: Բալէրմօ բնակող Իտալացի նշանաւոր բժիշկ մը, Բրօֆէսէօր Զէրվէլլօ, երկարատե ուսումնասիրութիւններէ և փորձերէ ետքը, սա եղբակացութեան յանգեք է թէ, թոքային հիւժախտը կրնայ դարմանուիլ *aldéhyde formique* կոչուած դեղով, զոր հիւանդին շնչել տալու համար *vaporigène* կոչուած գործիք մը հնարած է: Մեծահարուստ ու մարդասէր Իտալացի մը, Ֆլօրիօ, համոզուելով իր ազգակից Բրօֆէսէօրին գիւտին յաջողութեանը, Բալէրմոյէն բանի մը վայրկեան հեռաւորութեամբ օգասուն վիլլա մը գներ եւ դարմանատունի վերածեր է, անոր 50 սենեակներուն վրայ 50 ուրիշ սենեակներ ալ աւելցնելով: Այդ դարմանատան բացումը տեղի պիտի ունենայ Օգոստոս 1ին: Բրօֆէսէօր Զէրվէլլօ, երկու ամսուան դարմանումէ ետքը ԲՈԼՈՐՈՎԻՆ առողջացուցեր է 9 թոքախտաւոր և 7 հատ ալ առողջացնելու վրայ է եղեր:

Խափշիկ մը ճերմկացած

Ա. Իեննայի մէջ պատահած է դէպքը և ոչ թէ Ամերիկա. մեք չտեսանք, իրաւ է. բայց լրագիրները կ'ըսեն թէ Լաշօ անուն դատապարտեալ խափշիկ մը որ Ա. Իեննայի մէջ ջղային տկարութեան մ'ենթարկուած և բըժիշկ մը ելեկտրականութեամբ դարմանած էր, ո'չ միայն հիւանդութենէ ազատուեր, այլ միանգամայն սեւ մորթն ալ բոլորովին ճերմկցեր է, հակառակ իր գոռը մազերուն եւ մեծ չրթունքներուն որ հակապատկեր մը կ'կազմեն իր ճերմկացած մորթին: Այս նոր երևոյթը Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննայի մէջ պատահեր է և բժիշկներն անկէ ի վեր սեւեր կը փնտռեն եղեր ճերմկցնելու համար:

Ամբողջ առան մը հարսնաւոր

Քրանսայի և Նաւարայի ամենէն մոռ-
ցուած Սէն Նիքօլա տը Պրէմ աւանի ժողո-
վորդը, ընդ ամէնն 150 հոգի, մօտերս ութ
օր շարունակ հարսանիք մը պիտի կատարեն,
որովհետեւ այդ փոքր աւանի մէջ 17 ամուս-
նութիւն մէկէն տեղի պիտի ունենայ եղեր.
ուստի աւանին պետը որոշեր է որ այդ 17
պոյգի ամուսնութիւնն ի միասին կատարուի,
ամբողջ աւանին բնակիչները գոնէ ութ օր
խնջոյքի մէջ անցընեն և բոլոր ծախքն ալ իր-
մէ պիտի հայթայթուի: Երջանիկ աւան:

Ո՞վ է այն բախդաւորը, որ իշխա-
նի մը, հանրապետութեան նախագահի
մը, թագաւորի մը ու վերջապէս կայսեր
մը առջև կը նստի անտարբեր ու գլու-
խը գլխարկով.

— Կառավարը:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ



ԹէՖԱՐ ՀԱՆԸՄԵՆՑ ՊԱՏԱՀԱԾԸ

Չորեքշաբթի իրիկուն, քաղաքիս
թողապետական ծովեզն յետայ պարտէզին
մէջ, անշուք տեղ մը դրուած նստա-
բաններէն մէկուն վրայ երկու տիկին-
ներ ծունկի վրայ նստած էին, քովեր-
նին ալ ունենալով ծրար մը: Եոյն միջո-
ցին ծովու լողանքէն վերադարձող ի-
րենց ծանօթ մէկ քանի տիկիններ հոն-
կէ անցնելու ժամանակ անոնց մօտեցան
և սկսան խօսակցիլ այսպէս.

— Բարի իրիկուն ԹէՖար հանրմ:

— Աստուծու բարին:

— Պէտքէլի գուք ալ մեզի պէս
ծով մտեր էք տէ՛ սանկ քիչ մը հոգ-
նութիւն առնելու համար հոս եկեր նըս-
տեր էք. ֆախաթ, փորերնիդ կը ցա-
ւի կոր քի ստքերնիդ վեր էք առեր.

— Սուս եղիր քուրուկ, սահաթ մըն
է ասանկ կծիկ եղեր նստեր ենք. սէպէպ
ըլլողը չի հանդչի՛:

— Խեղ ըլլայ ԹէՖար հանրմ, ինչ
եղաւ քի.

— Քա ճանրմ, քառսուն տարին
հեղ մը ելանք կոստուղ ծով մը մըտ-
նանք ըսինք. պանեօէն քիչ մը անդին
գացինք ծով մտանք, թամամ քի մէկ
երկու հեղ գլուխնիս ջուրը խաթեր հա-
ներ էինք, հանած վարած շունչանորդի
լակոտին մէկը՝ ան կիւղէլիմ տիլլէմէ
սե չօրապներնիս ըսկարբինին մէջէն
թուցուցեր լեռն ի վեր կը վալէր:

— Վույ անիրծականերու դայ պի-
լէքիմ. էյ ետքը ինչ ըրիք.

— Ինչ կընայինք ընել, բոպիկ
բոպիկ ըսկարբինն ընիս հագանք ու թէն-
հա ճամբէն ինքզինքնիս աս գանէրային
վրայ նետեցինք. հիմա մութը կոխ-
լուն կը պէքլէյէնք քի չօրապնդ ըլլա-
նիս պէլլի չընելով տուն իյնանք:

— Իրիկուն համար ֆատուրայով
միսն ալ կրակին վրայ ձգած չըլլանք
պարէ:

— Չեղի բան մը ըսեմ, հայտէ
եկէք զործը պէլլի չընելու համար չոր-
սերնիս ալ պօյերնիս կարճցնենք տէ՛ սա
թէնհա գուռնէն դուրս ելած՝ լեռան
ճամբէն ձեզ տուն տանինք:

— Ույ հէմէն աստուած կէնճ ա-
րեւդ պահէ, քուրուկ, մինչև մութ հոս
խապանօզի պէս դանաբէին վրայ պիտի
մնայինք. սէօլտէ կուտուղ պա եօ ը-
րինք, հինգ հինգ զրուշնոց ֆիրաիօզ
չօրապներնիս վրայ տուինք:

Երբ այս չորս տիկինները թե թեի
մտած, ստքերնին չի ցուցնելու համար
փորի ցաւէ սաստիկ նեղուողներու պէս
կօկօզաձև քալուածքով կը մեկնէին, ի-
րենց դէմ ելլող մէկ քանի անցորդներ
քահ քահ կը խնդային:

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱՒ . .

(Շարունակութիւն)

— Աստուծոն նորածին մը մկրտած էի, անոր տունը կերթամ աչքի լոյսի համար ըստ սովորութեան քանի մը քօնեաք խմելու :

— Տէր պապա, արդեօք կրնամ հարցնել թէ, ինչո՞ւ խելքդ միտքդ այսչափ քօնեաքին վազեր է :

— Որովհետեւ, չօրհնած, ըստ պատուերի Պ. գրոց օղի կամ քօնեաք խմելը մեզի կը վայէ :

— Ինչպէս . . .

— Մտիկ ըրէ որ ըսեմ. Առաւել ԼԱ. գլուխ, 4, 5, 6 և 7 համարներուն մէջ ըստեա՞ծ է որ, «Օղի (կամ քօնեաք) խմելը՝ մեծերուն, իշխաններուն ու թագաւորներուն չի վայելը. չըլլայ որ խմեն ու օրէնքը մոռնան : «Օղին՝ կորսուելու վրայ եղողներուն, դառնահոգիներուն տուէք որ անոնք խմեն ու իրենց աղքատութիւնը մոռնալով իրենց նեղութիւնը մէյ մըն ալ չի յիշեն» : Հիսաւաբար, ես, տրուպ պաշտօնեայս եկեղեցւոյ, յառաջ քան ընդունելոյ զբահմայութիւնս, դառնահոգի մի անձ գողով, ըմպելով ըմպէի անդէն զքօնեաքն պատուական, մանաւանդ եթէ լինէր նա՝ ի տեսակէն մեքափսական :

— Չըսե՞ս տէր պապա, թուրքին ըսածին պէս, «չէրաթը բէնտինէ ույտուրմուշ սըն» :

— Այդպէս է, Պ. Բոժոժիկ, հետեալ բար ամեն ատեն, հարսնիքի, կնուների, մեռելի, կիրակամուտքի, այգողքի, ՚ի մի բան զտիւ և զգիշեր ախորժանօք կուլ տամ ըզքօնեաքն անգուգական :

— Իչո՞վ Մարգօվա գացած ատենդ ալ կը խմե՞ս .

— Հապա՞, ճիշդ ատենն է խմելու . . . ասկէց զատ, թուղի անուշ եփած ատենս ալ կը խմեմ. ու այնչափ կը խմեմ որ՝ անուշին սանը կրակէն վար առած ատենս անդգուշու թեամբ ձեռքերս կոյրեմ. բայց ինչ որ ըսեն, ամենեկին հոգս չընեմ. որովհետեւ, յայտնի է աստուածսիրութեան ձերում որ,

երիցս երանեալ Նոյ նահապետ ալ անչափ կը ճնկեր, և որ մինչև անգամ մերկ պառկեցաւ .

— Ըսել է որ եթէ քեզի ալ տաճնկ բան մը պատահի, հոգդ չպիտի ընես .

— Ինչո՞ւ հոգս ընեմ. քօնեաք տըր պու եսվում, տօմ տօմ հէլվասը տէյիլ, մարդը մերկ ալ կը պառկեցնէ մերթ ալ կը խաղցունէ :

— Ըսել է որ այն աստիճան կոճեմէ յառաջ գալիք փորձանքներն ալ ձեզի համար կարեւորութիւն չունին :

— Երբէք, վարդը սիրողը փուշն ալ պիտի սիրէ, այն աստիճան կը սիրեմ երանելին քօնեաքը որ, երկու խօսքին մէկը կ'ուզեմ զայն յիշել :

— Եւ անշուշտ մեծ հաճոյք պիտի պատճառէ մէկը, երբ խնդրոյ մը համար Չեզի ներկայացած ատեն ձեռքը շիշ մը քօնեաք ունենայ :

— Պապօ՞. բերանդ պագնեմ. տեսա՞ր հիւսա. ճիշդ ուզած մարդս ես եղեր :

— Անանկ է նէ տէր պապա, քօնեաքիդ տէրօն չի լեցուցած, սանկ նստէ որ շուտ մը բեզ կշռեմ .

— Բայց, չօրհնած, տաճնկ բան կըլլա՞յ մի ես . . . տակաւին չի խմած . . .

— Իրաւունք ունիս. բայց ես ալ կը վախնամ որ, եթէ քօնեաքի տէրօք լեցունելէդ ետքը զբեզ կշռելու ելլեմ, խանթարս չի բաշեր .

— Խանթարդ քանի՞ քիւօնոց է .

— 200 .

— Պզտիկ չէ՞ մի ես, Պ. Բոժոժիկ .

— Է՛հ, իմ կշռելիքներս ալ 3-400 քիւօնոց խաղիւթոյի ֆըշիներ չեն. ու թէ որ այդ աստիճան ծանր քաշելիք մարդու մը հանդըպիմ, կեօմիլիկեն մեծ խանթար մը բերել կուտամ : Հայտէ, հրամմէ նստէ՝ նայինք, անգամ մը փորձենք . . . (կշռելով) հարիւր իննսունը ութը . . .

— Հարիւր իննսունը ութը մի՞ . . . խնդրեցա՞ր Բոժոժիկ .

— Սանքի, շա՞տ եկար ըսել կուզես .

— Անանկ չէ՞ մի ես . . . մանաւանդ որ տակաւին չիլման ըրած չեմ . . . երկու ժամ մէ՛ ՚ի վեր :

(Շարունակելի)

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆՆԵՐ
ԵՐԱՂԽԱՌՈՐԵԱՅ

Ա. ՊԱՐԳԵՒՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	թիւեր
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

ԳԻՆՆԵՐՆ ԵՆ ՈՍԿԻ ՖՐ.	Կէս	Քառորդ	Մէկ տ. թերդ.
Ա. Մ. Բ. Գ. Ե. Զ.	5 Ֆ.	2, 50 Ֆ.	1, 25 Ֆ.
Ա. Ա. Բ. Գ. Ե. Զ.	10 Ֆ.	4 5 6 7 8	2 2, 50 3, 50 3 2, 15 14, 40
Ա. Բ. Գ. Ե. Զ.	16 20 28 24 17, 20	4, 30	28, 80
Ա. Բ. Գ. Ե. Զ.	115, 20	57, 60	

Գինեւոր. և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գրեմել Սեդակաւոր Տիւր ՍԱՐԳՍԻՍ ԳԱՅՐԻԷԼԵԱՆ, վրասկ զիսաւոր գործակալ սոյն պիտի գտնուի Երևան, Մուսալիս:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:
Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէն ալ վճարել:

Отговорникъ М. Сконовъ
Печантица Взаимность — "Варна."

Մ. 2.

ԹՈՒԹՈՎՄՈՒՆՔ

Գողարիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:



ԳՈՒՇԱԿ
Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի
Կամ Զուարճալի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով գիմել խմբագրութեան:

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

ՄԵՂՔ և ԱՊԱՇԱԼԻ

Պոլսական կեանքէ քաղուած
Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.
Գրեց Տիրան Գ. Փափազեան
Գին 60 սանդիմ: Գիմել խմբագրութեան:

ԸՆԴԱՐՁԱԿ

ՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Կամ Հաւարածոյ

Հին եւ հոր Ազգ. երգերու



208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի Վառնա Ա. Զարպհանէլեանի գրատունը: Գինն է 2 ֆր. թղթատարի ծախքը ԳԸրատան վրայ ըլլալով: Դրամի փոխարէն կ'ընդունուի Պուլկարական Գաղ. Գերմ. Անգլ. և Թրքական չի գործածուած նամակադրոշմներ: